



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՔԵՆՈՒԹՅԱՆ

ԵՐԲՈՒՆԻ ԵՔԵՆՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ԹԻԻ 43

5/18 ՄԱՅԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ


ԵՍ ԵՄ
ԵՆՍԻՄ
ՏՈՒՐՈՒ
ԿԵՆԻՄ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի : 5/18 Մայիս : Թիւ 43

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Եւ ինքը Տէր Յիսուս անունը հէտ խօսեցէ վերջը, ետէինք վերացաւ ու
Հօր աջ կողմը նստաւ: Հին Կառկարանի մէջ գիտենք որ Եղիա Երկինք
յառչտակեցաւ: Սակայն Եղիա բարձրացաւ եւ անյայտ տեղ մը կ'ապրի
ի խաղաղութեան: մինչեւ որ աշխարհիս վերջը վերադառնայ եւ մահուան
պարտքը վճարէ: Անոր մահը յապաղած է, լայց անկէ խուսափած չէ:
Իսկ մեր Փրկիչը որովհետեւ չյապաղեց մահը, յաղթեց եւ յարութիւն
առնելով սպաննեց զայն. եւ համբաւանալով իր յարութեան փառքը հռչա-
կեց: Դարձեալ պէտք է գիտել որ Եղիա համբարձաւ կառօք. որպէսզի
յայտ յանդիման ցուցուի թէ լոկ մարդ կարօտ է ուրիշի օգնութեան:
Հրեշտակներու օգնութեամբ կատարուեցաւ այն. քանզի չէր կրնար ընդ
օգս բարձրանալ այն որ ծանրաբեռնուած էր բնութեան տկարութեամբ:
Իսկ մեր փրկիչին համար կը կարգանք որ համբարձաւ՝ ո՛չ կառօք եւ ոչ

հրեշտակաց օգնութեամբ. քանզի նա որ ամէն բան ստեղծած էր, ամէն բանէ վեր կը բարձրանար իր իսկ զօրութեամբ: Հո՛ն կը դառնար. ուր էր. և այն տեղէն կը դառնար, ուր կը մնար. որովհետեւ մարդկութեամբը երկինք համբաւնալով, աստուածութեամբը երկիրս ու երկինքը հաւասարապէս կը բովանդակէր:

Եւ ինչպէս որ Յովսէփ իր եղբայրներէն ծախուելովը, մեր Փրկչին մասնուիր նշանակեց, այսպէս Ենովք յափշտակուելովը, և Եղիա ընդ օդս բարձրանալովը, Տէրունական Համբարձումը նախագուշակեցին: Ուստի Տէրն մեր իր Համբարձման նախակարապետներն ու վկաները ունեցաւ, մին Մովսիսական օրէնքէն առաջ, միւսը՝ ընդ օրինօք. որպէսզի իմացուի թէ ճշմարտապէս երկինք մանուլը, որ մին ալ կրկին պիտի գայ:

Պէտք է խորհրդածենք նաեւ զայն զոր կ'ըսէ Ս. Մարկոս. նստաւ ընկ աջնե Հօր. և Ստեփանոս բոսաւ. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած և զՈրդին մարդոյ որ կը կենայ Աստուծոյ աջ կողմը» (Գործ. է. 55): Ինչո՞ւ է որ Մարկոս կ'ըսէ թէ նստաւ և Ստեփանոս կ'ըսէ թէ ոտքի վրայ կեցած էր: Գիտէք սակայն, եղբա՛րք իմ, զի նախկը դատուի գործ է, կենալը պատերազմողի կամ օգնողի: Ուստի Տէրն մեր երկինք համբաւնալով հիմա ամէն բան կը դառնէ, և ի վախճանի պիտի գայ ամէնուն դատաւոր: Մարկոս կը նկարագրէ զինքը նստած, զի համբարձման փառքէն վերջը Դատաւոր պիտի երևի ի վախճանի: Իսկ Ստեփանոս, մինչ պայքարելու տաժանման մէջ էր, սեսաւ կայնած զանիկա՝ զոր ունեցաւ իւրեն օգնական, որովհետեւ որպէս զի նահատակը կարողանար հաղածիչներուն անհաւաստութեան յաղթել, իրեն համար երկինքէն Անոր չորհրդը պատերազմեցաւ:

Եւ անոնք եղելով կը փարգեհին քչոր երկրի վրայ. Տիրոջ զործակցութեամբ. և խօսքը կը հաստատուի այն ամէն հրաշքներով որ անոնց ետեւի կ'երթային: Այս ամենուն մէջ ի՞նչ արժանի է խորհրդածութեան և յիշատակի, եթէ ոչ զի Տիրոջ պատուիրանին հետեւեցաւ. հնազանդութիւն, և հնազանդութեան հրաշքներ:

Հիմա Տեառն օգնութեամբ քանի մը բան ալ օրուանս հանդիսութեան վրայ պէտք է ըսենք:


Նախ և առաջ պէտք է խորհինք թէ ի՞նչ կը նշանակէ թէ Յիսուսի Մշնդեան տան երեւցող հրեշտակներու համար գրուած չկայ թէ ճերմակ զգեստներով էին. մինչդեռ համարձման տան զրկուած հրեշտակները սպիտակազգեստ երեւցան: Բանդի այսպէս է գրուած. «Եւ երբ կը նայեին անոնք, վերացաւ. միևնչեւ ապշած կը նայեին անոր երկինք երթալուն, անա երկու այրեր երեւցան անոնց սպիտակ զգեստներով» (Գործ. Ա. 9—10): Արդ, ճերմակ զգեստներով կը նշանակուի ուրախութիւն և խնդութիւն մտաց: Ոյր վրան երբ Տէրն Համբարձաւ, ճերմակ զգեստներով երեւցան, զի հրեշտակաց մեծ ուրախութիւն եղաւ: Մշնդեան տ.

տեն աստուածութիւնը կ'երեւէր խոնարհած . իսկ համբարձման ատեն մարդկութիւնը բարձրացաւ : Եւ ճերմակ զգեստներն աւելի կը յարմարին բարձրացման քան խոնարհութեան :

Բայց այս հանգիստութեան մէջ ամէնէն աւելի զայս պէտք է խորհրդածենք : սիրելի՛ք , որ այսօր մեր դատաւարաւորութեան ձեռագիրը պատուեցաւ . մեր տղականութեան վճիռը փոխուեցաւ : Քանզի այն բնութիւնը որուն բնուած էր՝ Հոգիին եւ ի հոգի պիտի դառնաս (Ծնն . Գ . 19) , այսօր երկինք գնաց : Այս հանգիստութեան համար նախագուշակեց սաղմոսերգուն՝ ըսելով . «Երկիւնքներէն վեր քարճարացաւ իմ մեծօրայեղութիւնը» (Սղմ . Ը , 2) . և զարձեւաւ . «Համբարձաւ Աստուած օրհնութեամբ , եւ Տէր մեր ձայնիւ փողոյ» (ԽԶ , 6) : Եւ ուրիշ տեղ . «Երաւ քարճարները , գերի յուսւ գերութիւնը , աւար առաւ , բաշխեց պարգեւներ եւ տուաւ որդեղ մարդիկ» (Կէ . 19) : Իր համբարձման ասեւն գերութիւնը գերի յուսւ . քանզի մեր տղականութիւնը իւր անապականութեան զօրութիւնը ընկղմեց : Եւ պարգեւներ տուաւ մարդիկներու . քանզի ի վերուստ զրկելով զՀոգին , մէկու մը իմաստութեան խօսքը , ուրիշի մը գիտութեան խօսքը . միւսին բժշկութեան շնորհք , ուրիշ մէկուն յաջողութեան զօրութիւն , այլու՛մ ընդունեցաւ տեսակներ , այլու՛մ ընդունաց թարգմանութիւն շնորհեց (Ա . Կոր . ԺԲ , 8) : Այս համբարձման փառքին համար է որ Ամբակում թաւ . «Բարճարացաւ արեւը , եւ շուսիւնը կեցաւ իր կարգին մէջ (Գ . 11) : Ո՞վ է արեւն եթէ ոչ Տէր . և ո՞վ լուսինը՝ եթէ ոչ Եկեղեցի : Քանզի մինչև Համբարձման օրը Եկեղեցին վախցաւ աշխարհիս հակասութենէն . իսկ անոր համբարձումովը զօրանալէն վերջը , բացայայտ քարոզեց ինչ որ ի ծածուկ հաւատացած էր : Բարճարացաւ ուրեմն Արեւն , և Հուսինը կեցաւ իր կարգին մէջ . քանզի երբ Տէր գնաց յերկինս , անոր Ս . Եկեղեցին քարոզելու իշխանութեան մէջ զարգացաւ : Որով Եկեղեցւոյ բերնով կ'ըսուի Երգերգոցի մէջ (Բ , 8) . «Ահաւասիկ աս եկաւ վազս առնելով շեղեցաւ վրայ , խաղաղով թշուրեւեռու վրայ :» Որովհետեւ մեր փրկութեան գալով , կարծես վազս առնու . Կ'ուզէ՞ք , ամենաւերջի եղբարք , գիտնալ անոր վազքերը : Երկնքէն եկաւ յարգանդ Կուսի , արդանդէն ի մսուր , մսուրէն ի խաչ , խաչէն ի գերեզման , գերեզմանէն վերադարձաւ յերկինս : Ահա՛ որպէս գի զմեզ իր ետեւէն ձգէ , մարմնով յայտնեալ ճշմարտութիւնը մեզ համար վազս առաւ . քանզի «Հսկայի պէս ցնծաց նա իր ճաւրոնն վրայ վազած ասեւն» (Սղմ . ԺԸ , 6) . որպէս զի մենք ի բոլոր արտէ ըսենք իրեն . «Ետեւեղ քաջ՝ զիս , իմ քաջք քաջութեամբ ետեւեկ վազեմք (Երգ . Ա . 3) :

Ուստի ամենասիրելի եղբարք իմ , պէտք է որ հո՛ն դիմենք սրտով , ուր կը հաւատանք որ նա մարմնովը համբարձաւ : Երկրաւոր ցանկութիւններէն փախչինք . ոչինչ զմեզ հեշտացնէ այս ստորին և անարդ թանկէ : մինչ Հայր մը ունինք երկնքի մէջ : Եւ կը պարտինք վե՛՛՛՛՛ մտադ-

րութեամբ խորհրդածել թէ, նա որ խաղաղօրէն համարձաւ, սարսափելի պիտի զայ միւս անգամ, և ինչ որ մեզի հեղութեամբ պատուիրեց, խստութեամբ պիտի պահանջէ։ Ոչ ոք ուրեմն ապաշխարութեան համար չնորհուած ժամանակը արհամարհէ. ոչ ոք, քանի որ կարող է, զանցառու գտնուի իր փրկութեան գործը հոգալու. որովհետեւ մեր Փրկիչը դատաստանի մէջ այնչափ աւելի խստապահանջ պիտի ըլլայ մեզի, որչափ որ դատաստանէն առաջ մեծ համբերութիւն ցոյց տուաւ։ Ասոնք խորհեցէ՛ք ուրեմն, եղբա՛րք. ասոնք անխոնջ մտածեցէք ձեր մէջ։ Թշալէտ հիմա աշխարհային խռովութեանց պատճառաւ ձեր հողին վրդովեալ ըլլայ, սուկայն ձեր յուսոյ խարխիւր յաւիտեական հայրենեաց մէջ ամբարաղեցէք, ձեր մտաց ուշադրութիւնը ճշմարիտ լուսոյ մէջ հաստատեցէ՛ք։ Անա լսեցինք որ Տէրը երկինք վերացաւ. պէտք է որ այս մեր հաւատացած ճշմարտութիւնը մեր մտաց մէջ սեւեռեալ պահենք շարունակ։ Եւ եթէ դեռ հոս կապուած ենք մարմնոյ տկարութեամբ, գոնէ՛ հետեւինք անոր մեր սիրոյ քայլերովը։ Եւ վստահ եղէ՛ք որ չլքանիր մեր փափաքը նա որ զայն տուաւ, Յիսուս Բրիստոս Տէր մեր, որ կենդանի է և թագաւորէ ընդ Աստուծոյ Հօր ի միութեան Հոգւոյն Սրբոյ Աստուծոյ, ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՀԱՍՈՒԹԻՑ ԽՈՐՀՐԴՈՅ

Միսիւր եփեմիս

Լիվանք Հեռաց դպրասարնրն 112 նիւեկոյն նիւսիսիսե միւսսսրժը նազարըմ օրան ինքեւիլու շեղիկեհի պեմի միսսսսր եհեմիկիքի-նե մեպի քեռնեմ եյեհիսեհե յուրժեմ Կարողիկ Արազանգ րեսալեյի միւրեպեհեհիգի իյ չըգանագ նիւեկոյնսա սեռնիկ իսքիւհաւ եյիւրիւ։

Պէյ օղլու, 29 Ապրիլ

Դարիկերիկցեմ պիւրի

ԵԷՆԻ ԷՐՄԷՆԻ ԳԱԹՕԼԻՔ ՄԷՍԷԼԷԼԷՐԻ

Հագիգաթէն աէ պու պէսպախթ ճէմաաթ օրոսընսա վուգուաթ եէքաիկէրինի թէվալի իյէյօր։ Հասութից եւ ծախուց խորհուրդ աէնիլէն Բաթրիգիսանէ վարիտաթ վէ մէսարիֆաթ գօմիսիօնըն ոօն իճթիմարնաա պու մէճլիսին հեյեհեքնե իսթիֆա իյլէմիշ օլտուլընը իշիթմիշ իաիք։ Պի-նաէն ալէյ, պու մէսէլէնին սէպէպի զուհուրը հագգընսա պարիլէրիմիլի թէնվիւր էյլէմէք իշիւն մէգքիւր հէյեհէթին րէյիսի պուլունան վէ բիյա-

ցածրագնա շէրէֆ վէ հայտնեթիլէ ըէք էյի թանըլմըզ օլան միւսկանէաճը Մօմճեան Պօղոս էֆէնտիյէ պիր մուխասպիրը մախսուս կէօնտէրմէյի ֆայի-տէսէն իսալի ատտ իթմէտիք : Միւմարիէյն Մօմճեան էֆէնտի թապլի օ-լան նէզաքէթ վէ գէրաֆէթիլէ մէմուրըմըզը հիւսնը գապուլ վէ ինթէր-վիռաւընա թէֆէրրուաթը լազլմէսիլէ ճէվապ վէրմիշ օլաուզընտան , պիզտէ իսթիհաւ օլունան օ մալիւմաթը խիւլասաթէն տէրճ իտիյօրըզ :

Բաթրիգիսանէ վարիտաթ վէ մէսարիֆաթ գօմիսիօնը ալէսսէվիյէ ճուճա էրթէսի կիւնլէրի ագաը իճթիմա իլէր իսէ տէ , ըէյիս Մօմճեան էֆէնտիին տաւլէթի իւզլէրինէ պու կիւնլէրաէ ֆէվզ էլ ատէ օլարապ թօրլանմըզ վէ պու իճթիմատա պիլ ճիւմլէ ագաը հաղըր պուլունմըշտըր :

Ճէլսէնին քիւշատընտա ըէյիս , Բաթրիգիսանէ գանշէլէրիա միւտիրի Գեբըյ . Աքիկեան Յօվսէֆ Վարդապետին հիւքիւմէթի բուհանիյէ խարա-ֆընտան մէմուրիյէթիւտէն էլ չէքտիրիւմիշ օլտըղընը պիլաիւրմիշ վէ միւ-մարիէյն վարդապետ տաւլէթ օլունարապ մուամէլէյի թէսլիմ իճրա իտիւ-միշ տիր :

Պէր մուճէպը տէֆաթիւր սանտրգատա 13,115 զրուշ մէվճուտ օլտըղը կէօրիւլէրէք պու մէպլաղտան 1,350 զրուշը ինթիյաճաթը ճարիյէյէ սարֆ օլունմապ իւզլէրէ Բաթրիգիսանէ սանտրղընտա պըրսագըլմիշ վէ միւթէպա-գիսի տախի մէզքիւր Բաթրիգիսանէին հիսապը ճարիսինէ մահսուպ օլ-մապ իչուն Օսմանը Պանգասընա թէվտի օլլնմըզ տըր :

Հիսապ մուամէլաթընտան սօնրա ըէյիսի մէճլիս աթիսէքի մէսէլէ-լէրի տախի տէրմիյան վէ ազայա պէյան էյլէմիշտիր :

1. Բաթրիգիսանէին ինթիյաճաթընա սարֆ օլունմապ իւզլէրէ տիւ-րէն Հիւքիւմէթի սէնիյէ թարաֆընտան վէրիլէն աթիյէ , մէրի իւլ իճրա օլան միլլի նիզամնամէ աճեամընա թէվֆիդէն Հասուլթից խորհուրդընա թէսլիսի լազլմ կէլիւքէն , նա մէչրու սուրէթտէ Մէճլիսի խարէ ըէյա-սէթինտէ ալը գօնմուշ տըր :

2. Իսարէ մէճլիսի աթիսէ հիսապ վէրէճէք օլան հէյիէթի մախ-սուսէ քէնտիսի օլմատըղը հալտէ նէրէյէ վէ նէյէ սարֆ օլունմաղը մէճ-հուլ օլան պիր նամլ օ Հասուլթից խորհուրդընտան այտա պիր մէպ-լաղը մուսայէն թալէպ իթմէքաէ իսրար էյլէմիշ տիր :

3. Ախիւրէն իճթիմա իտէն մէճլիսի միլլի , թէշքիւթընըն ատէմը մէչրուիյէթի սէպէպիլէ նամէչրու պիր հալտէ պուլունմապտա տըր , չիւնքի իսթիֆա վէ եա վէֆիյաթ հասէպիլէ ազասընըն ատէտի նըսֆընա էնմիշ օլան մէճլիսի միլլիին պու նօգսան ազալարը իքմալ իտիւմէք նիզամնամէյի միլլի աճեամընտան իքէն պու ճիհէթտէն սարֆը նազար իտիւմիշտիր :

4. Պինտէն ալէյ , աչըգտան աչըգա խիւաֆը նիզամնամէ հարա-քէթտէ պուլունան պիր մէճլիս թարաֆընտան ինթիսապ օլլնմըզ օլան մէճլիսի խարէնին վիւճուտը տախի զայրը մէչրու պուլունմապտա տըր :

Պաշտօնական ստորագրութիւնս, Արքեպիսկոպոսական վարդապետին մէմուրիյէթինին թաթիլի խապէրինի ալըր ալմապ պաշտօնէ մէզքիւր խաարէ մէճլիսի հէյ-
եթիմէ գանչէլլարի տաիրէսինէ կիտէրէք տայիրմէյի մէզքիւրէսին միւ-
տիրի մէսուլը վէ հախօտ, հիշ օլմագսա, հասուլթից խորհուրդը ընչիսինին
պիլէ հազրը պուլընմատըլը պիր սրրատա հազրխանէ չէքմէճէլէրինի ճէպ-
րէն աշմըլ վէ Բաթրիգխանէ միհրի ըսմիսինի իլէ կէչլիմիշ օլտըլընատ
իլավէ իլէմիշտիր:

Հասուլթից խորհուրդը ալասը սէրտ օլունան պու մէսէլէ քէնտի
չէրէք վէ հայսիյէթիլէրինէ մուխիլլ կէօրտիւքլէրինտէն միւճթիմիսին իս-
թիֆայա գարար վէրմիշլէր: Յագաթ պաշտօնէ զիքր օլունան սէպէպլէրէ
մէսինի մէճլիսի իտարէյի հազրէսին ինթիխապը քէյֆիլէթի քէնտիլէրէ
չայանը գապուլ օլմատըլընտան, ուսուլը վէճիլէ մէճլիսէ պիր իսթիֆա-
նամէ եագմագ իսթէմէյուպ, պու խուսուարն գապթիւմէյի միւզաքէրա-
թա կէչլիլմէսինի միւնասիպ տատ էյլէմիշլէրտիր:

Պունուն իւզէրինէ գանչէլլարիա մէմուրլարը տալէթ օլունմըլ վէ
ընչիս թարաֆընտան, իւլէքգասը տախի հազրը պուլընտուգլարը հալտէ,
մէճլիսին մուզարրէրաթը օնլարա թէպլիլ իտիմիշ: Վէ ուզուն միւտ-
տէթտէն պէրի խըտէմաթը սատըլանէսի չէքէսէ միւսէլլէմ օլտն վէ
Բաթրիգխանէ մէմուրլարընըն գըտէմլիսի պուլընտան Բարլասի Գրիգոր
էֆէնտիտէն մէսուլթիլէթի ումգըր տէր իւհտէ էյլէմէսի վէ միւթթատըֆ
օլտըլը էնլիլէթ վէ ֆէտաքեարըլըն եէնի պիր տէլիլինի տախի ճէմատ-
թընա վէրմէսի ըրճա օլընմըշտըր:

Մուխապիրի մախսուսըմըլա Մօմճիան էֆէնտի թարաֆընտան վէ-
րիլէն մալիւմաթ վէ իյզահաթ իշթէ պունլարարը:

ԾԵՐՊԵՐ ՈՒ ՊԱՏԱՌՈՒԱԾՆԵՐ

ԱՆՆԱԼԻԳԱՆ ԵՎ ԵՂԵՆՈՑ ՄԷՋ

Թշնամիներէ տրուած բարի վկայութիւնը միշտ ազգու և համոզո-
ղական եղած է: Անդրոյ թողոքական եկեղեցին, որ Հենրիկոս Է.ի ան-
գուսպ կիրքերուն անտրամաբանական մէկ տրարածն է, ընդհանուր կա-
թողիկէ եկեղեցւոյ Գլխէն, Հռովմայ Ս. Աթոռէն բաժնուած է քանի մը
դար յառաջ, մնալով սակայն ամէն թողոքական եկեղեցիներէն աւելի
մերձաւորն ու նմանապոյնը Կաթողիկէ եկեղեցւոյ, գաւառական սկըզ-
բունքներու և արարողութեանց վերաբերմամբ. զորս կը ճգնէր աւան-
դական հոգածութեամբ անվթար պահպանել: Բայց ճիշտի կրնայ տեսել
վազել ուռուակ մը որ ակնադրիւրէն բաժնուած ըլլայ, կամ դալար մնալ
ճիւղ մը որ ծառէն կտրուի: Այս դժբախտութեան պիտի ենթարկուէր

վերջ ի վերջոյ Անկլիքան Եկեղեցին, հակառակ իր բուն ջանքերուն: Տարիներէ ի վեր է որ անոր քաջութունն և ազնուգի վարդապետները (Docteurs)՝ Քէմպրիճի և Օքսֆորտի աշխարհահռչակ Համալսարաններէն ելած, լաւ թափանցելով այդ եկեղեցւոյն սկզբնապուրկ աղքատութեան և շնորհաց աղբիւր ցամքելուն, խոր ուսումնասիրութենէ և աշուար իղծի պայքարներէ վերջը, ամէն զոհողութեանց յանձնառու ըլլալով, լքեցին զայն, մեծադժուրդ աղմուկ հանելով իրենց այլեւայլ հռչակաւոր դարձած անուններուն շուրջը. այսպիսիներէն են Հ. Ֆէ'յալը, Կարդ. Մանլինկ, Կարդ. Նիուսըն ևն.:

Սակայն վերջերս Արդիականութեան (Modernisme) հրեշաւոր ուղանդը, որ իր ծոյցին մէջ կը պարունակէ գոգցիս ցարդ երեւան եկած ամէն հերետիկոսութիւնները, այնպէս թափանցեց Անկլիքան Եկեղեցւոյ բարձր հոգեւորականութեան տարրներուն մէջ, որ գամ քան զգամ կը սպառնայ սպառնալու կործանումն:

Ահա այս աշուար վտանգին առջեւ է որ իրենցմէ ուղղամիտներն անձկութեան և տագնապի աղաղակներ կ'արձակեն, որոնց թարգման կը հանդիսանայ «Օխֆըրսի եւ Քեկպրիճի Հանդեսը», տիտղոս աւելով իր յօդուածին «Ծեղկեր եւ պատառածներ Անկլիքան Եկեղեցւոյ մէջ»: Այս խոստովանութիւնները լսել կարծեմ մեծապէս օգտակար կ'ըլլայ Կաթողիկէիցս համար, անաղարտ պահպանելու մեր Ս. Կրօնքին գանձը, չգրկուելու համար Աստուծոյ Ս. շնորհներէն, առնելով հաւատոյ վահանը որով կարող ըլլանք «զամենայն նեսս մոխս ջարիւն շիջուցանել»: Քանզի ով որ հաւատար, «Արդեմ իսկ պատարեալ է:

Յիշեալ Հանդէսը ցոյց կու տայ Անկլիքան Եկեղեցւոյ Արդիականաց թոյնէն ազատուելու անկարելիութիւնը: Անի տիրութեամբ համակուած է գուշակելով որ իր ահապանքը անլսելի պիտի մնայ: Թոյնը պիտի չարունակէ իր ժահրը թափելու. նախատեսուած վախճանն է անքնդհատ ուղիքաբումն զէպ ի վարդապետական և գործնական անհատութիւն: Այդ Եկեղեցւոյն վիճակը յուսահատական է, անոր համար որ չկայ անոր մէջ իշխանութիւն մը որ չարեաց առջեւն առնու: Պէտք է խոստովանիլ, կ'ըսէ, որ վարդապետական ճշգրտութեան պակասը միշտ Անկլիքան Եկեղեցւոյ բնորոշիչ նկարագիրը եղած է: Ըսել չէ որ, կը յարէ, այդ Եկեղեցին հերետիկոս ըլլայ. տարբերութիւն կայ ուղղափառութեան պակասին և հերետիկոսութեան մէջ¹. բայց մին զիւրութեամբ կ'առաջնորդէ միւսին: Եթէ Անկլիքան Եկեղեցին ընականաբար կը հակի զէպ ի հերետիկոսութիւն, ասիկայ գոնէ ցոյց կու տայ որ նորոգիչ բողոքականք այնպիսի հիմ մը դրին իրենց Եկեղեցւոյն, որ անի ենթարկուած է մեծ

¹ Արդէն այսպիսի պանդանութիւն մը ինքնին հերետիկոսութիւն է:

վտանգներու : Եթէ տեսնէինք որ Հռովմէական Եկեղեցին ալ միեւնոյն զառիթափին վրայէն կը սայթաքի և քրիստոնէական կրօնքին էական սկզբունքները կը լքանէ , այս բանս գրեթէ կ'ապահովէր զմեզ մեր Եկեղեցւոյն վիճակին վրայ . բայց չկայ այսպիսի բան մը , փառաւորապէս կը դիմադրէ : Անգղիոյ մէջ ամէն օր կը տեսնենք որ Քէնթրըպրիի և Հռովմայ փոխադարձ պահանջանայ վրայ վէճեր կ'ըլլան : Շատերուն համար իրաց այս վիճակին տեսքը վճռական փաստ մը պիտի ըլլայ : Բարեմտութեամբ մինչև հիմա անորոշ մնացին . բայց քանի որ Քէնթրըպրի ոչինչ կ'ընէ և ոչինչ կրնայ ընել հաւատքը պաշտպանելու համար , անոնք պիտի երթան ի Հռովմ :

Եւ յիշուի , կարելի է միթէ ակնկալել որ Քէնթրըպրի դատապարտէ զԱրդիականութիւնը : Ան պիտի կարենայ նոյն իսկ փորձ մը փորձել իր Եկեղեցւոյն ծոցէն դուրս վտարելու այն անդամները որոնք կը յաւակնին իր հաւատոյ բանաձեւերուն տալ այնպիսի իմաստ մը զոր անոնք չունին և չեն կրնար ունենալ : Ո՞վ պիտի խօսի . ո՞վ ունի իշխանութիւն սահմանելու , այն յուսով որ իւր սահմանը պիտի ընդունուի : Պէտք չէ ինքը զինքը խտրել . անկիւքան Եկեղեցին հազարաւոր անդամներ ունի որ պատմականաբար յարած են իրեն , բայց որոնք թէ՛ եկեղեցական թէ՛ աշխարհական , անձկակարօտ կը սպասեն այն օրուան յորում վարդապետական խոչընդոտներէն զերծ պիտի ըլլան :

Չենք այլեւս այն ժամանակներու մէջ երբ հզօր պայքար կը մղուէր Աթանասայ Հանգանակին քանի մը համարներուն արուելիք իմաստին վրայ . պարզ և յայտնի Արդիականութեան հետ է որ գործ ունինք . այսինքն՝ այնպիսի չարժուածի մը հետ որ անցեալ ժամանակներու ամէն մոլորութիւններէն շատ աւելի հեռուն կ'երթայ : Չափազանց չենք ըլլար եթէ ըսենք թէ Արդիականներն կատարելապէս կ'ուրանան Քրիստոնէութիւնը : Եթէ դեռ կը հաւատան Աստուծոյ , պարզ յարգութիւն մը միայն ունին Քրիստոսի , զոր կը մերկացնեն իր սոստուածային բնութիւնէն :

Վտանգը յոյժ իրական է , ճշդիւ սրոյշեալ : Հապիւ թէ Հռովմ զայն նշմարեց , ամբաստանեց և դիմակազերծ ըրաւ զայն , և ճամբայ դրաւ :

Ընդհակառակն Անգղիոյ մէջ չար խմորը հանդարտօրէն ձգուած է ինքնիրեն . ոչ մէկը անհանգիստ պիտի ընուի : Հաստատուած Եկեղեցիին մէջ ուսուցանող ո՛չ մի անդամ պիտի հետապնդուի իր հերետիկոսութիւններուն համար . և ո՛չ մէկը պաշտօնանկ կամ կարգազուրկ պիտի ըլլայ : Որով զարհուրանքով կը տեսնենք յարձակումը , ընդդէմ պատմականութեան և վաւերականութեան այն Աստուածաշնչի , որու վրայ միայն հիմնուած կը կենայ մեր անկիւքան Եկեղեցին : Այս հակառակորդաց մէջ կղերականութեան բազմաթիւ անդամներ կը փափաքին նշանաւոր հանդիսանալ : Կասկածը ամենուրեք կը տարածեն , առանց հասկնալու վերջին արդիւնքը : Ստոյգ յեղափոխութիւն մըն է այս :

Իբաւ է որ մէթոտով կը յառաջանան . և կը կարծեն որ ապահովութեամբ և առանց վտանգի կրնան ընդունիլ այս ինչ բանը . մերժել այն ինչը : Կը յարգեն Հանգանակները , բայց կը հարուածեն Ս . Գրքը : Ի վեր կը զանազանեն պատմականն յայտնեալէն . առաջինը կը քննադատեն , երկրորդը կը մեծարեն : Տգէտ ժողովուրդը բնաւ այսօրինակ զանազանութիւններ չպիտի ընէ . իր արամաքածութեամբ երկու քին ալ միեւնոյն արհամարհանքով պիտի վերաբերուի . և պիտի եզրակացնէ անհաւաքութեան : Շուտով պիտի անդրադառնայ որ այս անկլիքան Եկեղեցին կարող Եկեղեցի մը չէ իր վարդապետութիւններն ու իր Ս . Գրքը պաշտպանելու : Ինչ կ'ուզէք որ մտածէ երբ կը տեսնէ թէ իր Եկեղեցականները այլեւս չեն հաւատար Քրիստոսի կուսական ծննդեան , յարութեան , համբարձման , աստուածութեան , և պատժոյ յաւիտենականութեան :

Իսկ չարիքը աւելի ծանր է անոր համար որ գործնական Արդիականութիւնը մաս կը կազմէ պաշտօնական ուսուցումի : Ս . Գրքը վրայ խօսակցութիւններ որ յիսուն տարի առաջ սարսափի աղաղակներ պիտի հանել տային , և այնպիսի Եկեղեցւոյ մը մէջ որ արդէն շատ խառապահանջ չէ վարդապետութեանց մասին , այսօր կղերներու մէջ ընթացիկ բաներ զարձած են : Կը տեսնէք ուրիշն որ արդիականութիւնը մտացածին ֆիորք մը չէ : Բողոքականութիւնը , իրրեւ դրական կրօնք , անկէ սպաննուելու վրայ է : Միմիայն Կաթողիկէութիւնը պիտի փրկէ իր կիսները այս մահաբեր թոյնէն :

ՆԵՐՔՈՒՄ ՍԸ

Անկիւրիոյ Հայ Կաթողիկէ Երեւիմեան Մեծ. Պետրոս Էմ. Գառապեանի կողմանէ ընդունեցանք հետեւեալ գրութիւնը , զոր սիրայօժար կը սպեցնէ , ի սէր հեմարտութեան եւ յուղղութիւն ինքնամասայց անձանց սխալ եւ դիտումնաւոր հրատարակութիւններուն :

Ֆազ . մուհարրիր էֆէնտի .

Մեծմուշի Ախպար զապէթաւընը 1970 նիւսխէսինտէ կէօյա էնգարէ Գաթօլիք ճէօմաւթը նամընա օլարազ Պ . Ճէվրի էֆ . Թարաֆընտան եազըլմըշ պիւ պէնտ տէրճ իտիլմիշ , պու նէշրիյաթըն միւնտէրիճաթընը՝ էնէմմիյէթի նօզթայը նազարընտան թէքզիպէ միւսարաաթ էտէրիմ : Էվվէլա Ճէվրի էֆէնտի , տպէն էնգարէլի օլմայըպ , Եօզկաթ էհալիսինէ մէնսուպ տըր . վէ էնգարէտէ պոպիթ ոլիւ մէսքէնէ մալիք տէյիլ , անձազ տաւա վէքեալէթիլլէ թէայիւշ իթմէքտէ տիւր . էնգարէ Գաթօլիք ճէմաւթը նամընա իճրայը մուամէլաթա հազգ ու սէլահիյէթի օլամազ , գապուլ տա իտիլէմէզ , թէվթիլ տէ իտիլմիշ տէյիլ տիւր :

Էնդարէ բխագօրօսու Պահապանեան Գրիգոր Գերապայծառ իլէ վա-
գը օլմուշ կիպի ճիքեայէ իթտիկի միւլագաթըն միւ պահասաթը իլէ թէ-
ֆէրրուաթը քիւլլուէն խիւաթը հագիգաթ օլտուղը կիպի, եպիսկոպոսը-
մըզա համը վէ հասը էթտիյի պէյանաթ տաթի թասնիաթտան իպարէթ տիր :

Էնդարէ Գաթօլիք ճէմաաթը պիր միւտտէթալէն պէրու, Կաթոզիկո-
սըմըզ թիւթպէթլու թէրգեան էֆէնտիյէ գարչը իճրա իտիլէն մուամէլաթը
ղա՛յրը մէշրուաեա գաթիէն իշթիրաք իթմէտիքտէն մասա, ծնլար իշին
պէյանը թէէսիւֆ էտէր, էպա ու էճաստրնըն Գաթօլիք մէզհէպինէ տա-
իմա սարկըն, Բոթա հագրէթլէրինէ վէ թուէսապը թուհանիէյէ տաթմա
իթաաթլը վէ աղիզ Բիլիսէ մէպաէլէրինէ մէրպութլիյէթը լազըմէտէ պի-
գուսուր վէ քէնտի միւհթէրէմ Եպիսկոպոսըյլա միւֆթէթիւր տիր :

Պինապէրին հէր տիւրլիւ միւպալաղա վէ իանտաաթ և թասնիաթա
րազմէն իշպու իֆատէմին գարի՛նը հագիգէթ օլտուղըն թաստիգէն իմզա
իտէրիմ :

28 Ապրիլ 1912

ՊԵՏՐՈՍ ԳՍՍԱՊԵԱՆ

ԹԵՐԹԵՐ

Ռուսիոյ Մշակ թերթն ալ հիւրընկալ է : Իր 68 թիւին մէջ Պօլսն
գրկուած թղթակցութիւն մը հրատարակած է՝ Հայ-Կաթոլիկէ խնդրոյն
առթիւ :

Այս յօդուածը գլխէ զլուս գիտումնաւոր և ստարան չազակրա-
տութեամբ և զրպարտութեամբ լի է : մենք լուսթեամբ կ'անցնինք ա-
նոնց վրայէն, ինչպէս միշտ լուսինք տեղական թերթերու կողմանէ ալ
եղած անիրաւ և անտեղի յարձակումներուն և նախատինքներուն, զի
այս տեսակ ոճերը իրենց տէրերուն խկութիւնը կը յայտնեն, և երանելի
յորջորջուեցան անոնք որ յանուն Քրիստոսի կրնախառուին : «Նախա-
տինք նախասպա, քոյ անկան ի վերայ իմ : և «Ով որ զձեզ կ'անարգէ
զիս կ'անարգէ : Սակայն այդ յօդուածին մէջ այնպիսի ասացուած մը
կայ՝ — արտակարգ և անճոռնի, — որ հարկ կը զգանք զայն ի վեր հա-
նել, որպէս զի ընթերցողք տեսնեն թէ այս տեսակ գաշտերու մէջ շահա-
տակող պաշտախօսներն ինչ տեսակ արամախառութիւն և Կաթոլիկէ
կրօնքի վրայ ինչ գողափար ունին : «Հայ-Կաթոլիկները պէտք է ըսել քե
քարոյական մեծ կորով եւ պզտիկ՝ այլ տակայն մեծ ազգերու յատուկ նկատա-
պիր մը ցոյց տաին Կաթոլիկ եկեղեցւոյն հաւատարիմ մնալով եւ Կաթոլիկ
ոգւոյն դէմ մարտնչելով : Կը տեսնէ՞ք փառաւոր հակառութիւնը : Բայց եթէ
կ'ուզէ ակնարկել այն Կաթոլիկէ անհատներուն որոնք ինքզինքնին շա-
րունակ ճշմարիտ Կաթոլիկէ եւ Ս. Արոտոյ հնազանդ քարոզելով հան-
դերձ, բոլորովին հակառակը գործեցին աւ կը գործեն, կարելի է հակա-

սութիւնը նուազի, թէև զանոնք այսին կատականայ ըրած կ'ըլլայ. այսու հանդերձ այսպիսի անտրամաբան և անխզճամիտ մարդիկը ի՞նչպէս «բարոյական մեծ կորովի» աէր կ'անուանէ... կամ՝ այդ նկարագիրը պզտիկ կոչելով, սադրե՞լ կամ թելադրե՞լ կ'ուզէ որ պէտք չէր որ հաւա- աարիմ մնային Կաթողիկէ Եկեղեցւոյն... հապա՛ ինչո՞ւ մեծ ազգերու յատուկ կը դառնէ այդ պզտիկ նկարագիրը՝ հաւասարիմ մնալու և դեմ մարտնչելու... Կը յաւելու, «Անոնք Կաթողիկէ Եկեղեցւոյ ներքին վերանորոգման ազդանշան մը տուին Արեւելիէն, ինչպէ՛ս երբեմն իրենց նախնիք՝ Թոնդրակեցւոց աղանդը սեղծեցին եւ եկեղեցին քարեկարգելու իրենց ոյժերէն անհամեմատ վեր ճիգը ըրին:» Կարծես Կալպուստիոս է կամ Տօն- քիչո՞ւ որ կը խօսի: Միայն թէ դարձեալ մեր Կաթողիկէ եղբայր նախա- տի՛նք, կը նմանցնէ զանոնք Թոնդրակեցւոց... ապա և Եկեղեցւոյն բարե- կարգելու յաւանդոտ դերը չատ պատուաւոր չէ աշխարհականաց համար, և յետոյ իրենց ուժերէն անհամեմատ վեր գործելու ճիգը իմաստուն մար- դու գործ չէ... կը յարէ՛ սակայն. «Հայ Կաթողիկներէն շատեաներ կը յուսան քե իրենց ԱՅՍ ճիգը պիտի պսակուի (!)»:

Եւ գաւառացի մը, որ զինքը Կաթողիկէ կ'անուանէ (Տե՛ս Ազա- տամարտ, Թ. 874) յանուն իր համախոհներուն կրցե՛ր է չճանչնալ ո՛չ Սիւննիդոս, ո՛չ Քահանայապետէն կարգուած Եպիսկոպոս, և պատգամ արձակել թէ՛ եկեղեցին ալ իրենց է, թէ՛ եկեղեցական կալուածներու մատակարարութեան ո՛չ միայն կը միջամտեն, այլ և եկեղեցական իշ- խանութեան միջամտութիւնն ալ բացարձակապէս կը մերժեն...

Անա այսպէս չփոթ, սխալ, անիմաստ, խեղճ բաներ:

Եւ թերթերը կ'արձանագրեն՝ այս խեղճութիւնները...

ՄԱՆՐԱԳՈՐԸ

ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱԳՐՈՒՄԸ ՍԲԱՆՁԵԼԻ ՅԱՏԿՈՒԹԻՆՆԵՐԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Մանրագործ մասին ժողո- վուրդին դարեւ ի վեր ու- նեցած աւելորդապատեական գաղափարներ:

Նախապատմական ժամանակներէ ի վեր, կրնայ ըսուիլ, առատակներով չըջապատուած է այս առեւկը, և ժողովուրդը զայն նկատած աւ- մէնէն արտառոց և անհեթեթ յատկութիւննե- րով ճոխացած հրաշալի մարդատունկ մը: Արդէն ստուգաբանօրէն տեսայիմ կը նշանակէ «սիրոյ խնձոր», տո՛ւ արմատէն՝ որ սիրել կը նշանակէ եր- րայեցերէն: Սեմական ժողովուրդները անոր կը վերագրէին սէր ազդելու, դեւերը հալածելու, ու մանաւանդ ամբողջինէ ազատելու յատկութիւն- ները: Յովսէփոս սքանչանքով կը խօսի անոր վրայ [Պատմ. Հր. Է. գ. 3],

և հին հեղինակներէ շատեր ալ համոզմամբ կը գրեն թէ ով որ այդ տունկը իր քով պահէ՝ երջանկութեան մէջ կ'ապրի միշտ [Sb'a Granier Dissert. sur la mandragore, 1788] : Ասաղիկ գիցուհւոյն ալ Հելլէնք շատ անգամ Մանտրակորեան տիպոսը կու տային, և անոր պտուղն ալ սիրոյ խնձոր կը յորջորջուէր [Hesychius, Lexicon] : Դիոսկորիտէս՝ Ա. դարու Յոյն բժիշկ մը փոքրիկ [թաւրնջակ=amarante] հետ կը նոյնացնէ մանրագորր, որովհետեւ կը կարծուէր թէ կրկէ անուն նշանաւոր վնուկ կենր այդ հրաշալի տունկին միջոցաւ կը կատարէր իր կախարդանքները : Պիւթագորաս այդ տունկին մարդակերպ անունը տուած է, իսկ Կոդուս մեղոս՝ Ա. Դարու համբաւաւոր լատին հեղինակ մը, կիսաւնարդ կ'անուանէ զայն և իբր հրաշալի տունկ մը կը նկատեն երկուքն ալ :

Միջին դարու կախարդները մեծ պատիւ կ'ընծայէին մանրագորրի, և ամէնէն անհաւատալի յատկութիւնները կը վերագրէին անոր [Du Cange, Glossarium, Littre, Dict.] : Ժողովուրդն ալ տեսակ մը երկիւղած յորգանքով կը չըջապատէր այդ տունկը : Ամէնէն լուսամիտ կեդրոններու մէջ անգամ հրապարակներու վրայ շատ սուղ գիներով կը ծախուէին քանդակուած մանրագորր արմատները : Շէյքսպիր իր թատերգութիւններուն մէջ սաէպ ակնարկութիւններ ըրած է մանրագորրի վերագրուած յատկութիւններուն : Բայց ո՛րքան ալ միջին դարու մէջ աւելորդապաշտական գաղափարները ահեղ համեմատութիւններ առած էին մանրագորրի մասին, բայց անոնք ստակաւ տեղի տուին, և ա՛լ ո՛ր է աւելորդապաշտութեան հետք մը չէ մնացած : Մինչ Արեւելքի մէջ դեռ շատ մը տեղեր կը մնան նոյն աւելորդապաշտական գաղափարները : Ու գլխաւոր կեդրոններու մէջ, բաւական շահաւէտ աղբիւր մը կը կազմէ ան հրապարակներու վրայ և տօնավաճառներու մէջ : Արաբները մեծ վստահութեամբ կը պնդեն թէ մանրագորր իսկապարեցնելու աստիճան զգայութիւնները գրգռելու բնոյթը ունի : Հայաստանի մէջ, շատ մը տեղեր, ա՛յնչափ մեծ վստահութիւն ունին մարդասակին կամ դոժդոժին վրայ՝ որ երբ իրենց ո՛ր է մէկ անգամը ցաւի, նոյնին համապատասխանող մասը մարդասակէն կտրելով՝ կը կտպեն ցաւած անգամին վրայ, ու կ'ապասնեն որ բժշկուի, թէ կը յաջողի, այդ իրենք ալ կարող չեն վստահ կերպով հաստատել :

Ինչպէս տունկին յատկութիւնները հրաշալեաց կարգ անցած էր, այսպէս ալ շատ մը աւելորդապաշտ արարողութիւններով կը հանէին զայն հողին մէջէն : Ամիրտովլաթ այս մասին երկար կը գրէ լսելով :

Այս խոտիս հանելուն տառն յայն ժամն է որ... օրն Գլ. լինի, և արեւն ի ցայթել ժամն լինի, յան ժամն փորեն զօրեք դէհն, և հանց որ ինքն ի կախ մնայ, և մէկ քանի օր քաղցած շուն լինի բերին և ի վիզն չուան կապեն, և զչուփն զմէկ ծայրն ի յայն խոտին տակն կապեն որ փորել էիր, և ի հեռու տեղ երթաւ, և այն շանն ձայն ձայն տաւ, և այն շունն քաշքշկի, և զատկն ի տեղացն հանէ և շունն ստատակի :

Մեր նախնեաց քով մանրագորրի բնծայուած հրաշալի յատկութիւն-

ները կը գլեն կ'անցնին միջին դարու եւրոպական ակգերու քով ծանօթ և անծանօթ բոլոր աւելորդապաշտական գաղափարները: Ըստ մերայնոց՝ անօրինակ փայլով մը կը վառի եղեր ինքնիքն՝ մանրագորի կեղեւը, իսկ արմատը վայրկենապէս կը բժշկէ անդամալոյծները միայն տնոր հպեցնելով: Նմանապէս կը կարդանք Աղթարքի մը մէջ թէ ով որ «չատ խափաթ ունի» ուտելով, ըմպելով և հետ պահելով, շատ սղորմութիւն առնու. յԱստուծոյ և խոտիս [ի բան տանողին] միտքն բացվի, կարէ գիտել զերկնայինն և զերկրաւոր յատկութիւնս:»

Բայց թէ երբ և ի՞նչ պատճառաւ այսքան առասպելներու տեղի տուած է սոցն տունկը, բուռնական շահեկան պիտի բլլար գիտնալը, լայն բստ մեզ՝ ամէնէն հմուտ հնագէտ-բուսաբանն անգամ ենթադրական եղբակացութիւններէ զատ ուրիշ բանի մը չպիտի յանգէր: Թերեւս ստուգարանօրէն «սէր» նշանակելուն պէտք է վերագրել այսքան այլընդալոյ զաղափարները: Եւ կամ իր քիչ թէ շատ մարդկային կաղմի մօտ ձեւ մ'ունենալուն, ու կարգ մը բախտախնդիրներու աճարարութեամբ, մուտ զտած են այդ տեսակ գաղափարներ մը, և հետզհետէ ճոխացած ու ծաւալ զտած ժողովրդային խաւերուն մէջ:

Մանրագորը իր չքանը կատարած կ'երեւի արդէն, ու միայն ժողովրդային տգէտ խաւերուն մէջ կրցած է ազատասանարան մը դնել: Ան այսօր ծանօթ է միակ իր թմրեցուցիչ ու քնարեր յատկութիւններով միայն, և բժշկութիւնը պէտք անգամ չի դրար անոր այդ յատկութիւններէն իսկ օգտուելու:

ՀՐՈՒՇԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ


ՀՌՈՎ

Բարեպաշտական ուխտագնացութիւններն կը շարունակեն գէպ ի Հոռով, յոտո աստուածարեալ ծերունոյն, որ կը բազմի յԱթոռ Ս. Պետրոսի, Փոխանորդ Յիսուսի Բրիտանի Միջոցաւ այս ճերմեռանդն վերաբերումէն, որով հեռաւոր երկիրներու կաթողիկէ գաւազներ՝ ամէն գծաւարութեանց յաղթելով, կը վազեն խումբ խումբ իրենց երիցս երանեալ Հօր, կը մխիթարուի Անոր սիրտը, այդ ուխտաւորներն ալ կը տանին իրենց սիրեցեալ Բաճանայապետին Ս. Օրհնութիւնը. առհաւատչեալ ամենայն գերընտիր բարեաց:

Վերջերս Վատիկանու մէջ Սրբազան Հօր ներկայացաւ Թօրինոյ քաղաքին բնորեալ հաւատացեցող խումբ մը, որ նոյն գաւառէն եկող ուխտաւորներուն վեցերորդ խումբն էր, որ բառ ճառախօս նախագահին, կազար անպայման հպատակութեան ի ցոյց և խոնարհ բնօրոյնաւորաց: Եւ որովհետեւ հետեւեալ օրը պիտի մեկնէին ի Նաբօլի, յախտ Բոմբէիի Ս. Աստուածածնին, մասնաւոր օրհնութիւն եւս հալցեցին: Երբ Սրբազան Հաջորդ աւարտեց իր պատասխանը, ահա երկու շնորհալի մանկուէր Անոր Աթոռին աստիճաններէն վեր բարձրացան և մատուցին դամական նուերն:

նոյնպիսի արարողութիւններով ընդունուեցան ի Վատիկան՝ Սպանիոյ Պարլէմենտ քաղաքէն եկած ուխտաւորք:

Իսկ Ապրիլ 28ին հանգիստնորապէս ընդունուեցաւ Բեզգիոյ Կաթողիկէ թերթերուն ներկայացուցիչ խումբը որ ամէն տարի կուգայ ի Հռովմ պատուիրակութեամբ, որուն կը նախագահէր Պարոն տ'Էրր, Արտաքոյ կարգի դեսպան Բեզգիոյ Ս. Աթոռոյ ժօտ Սոնքալ, ինչպէս ամէն տարի, Սրբազան Քահանայապետին մատուցին իրենց հաւաքած մեծաքանակ գրամական նուէրը:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Հրամանաւ բարձրագոյն հոգեւոր իշխանութեան, ի պաշտօնէ կը հրատարակեմք հետեւեալ յայտարարութիւնը, զոր Գերջ. Յովհ. Ն. Վ. Արիկեան, նախկին Ատենադպիր ի Պատրիարքարանի Դպրութիոյ, յանձնած է Կաթողիկոսարանի.

Եւ ստորագրեալսն ցերեպիս կը յայտարարեմ քէ անցեալ Չորեքուրբի Երեկոյ Ամենապ. եւ Գերեջ. Հոգեւոր Տէրն զիս իւր բով կանչելով զեկոյց քէ Ղալաթիոյ Գիւանապետութեան սյուսօնէս հրաժարիմ, իսկոյն հնազանդեցալ: Սակայն նոյն միջոցին իօրակցութեան մէջ յանկարծակիի գալով աւելորդ եւ նախաճակն խօսքեր քրաժ ըլլալու համար անձամբ իրմէ ներումն խնդրեցի. եւ կը նաւանդիմ որ ոյս յայտարարութիւնս «Արձագանգ» շաբաթաթերթին մէջ հրատարակուի՝ ի շինուրիս հաւատարմեցոյ:

ՅՈՎ. ՍԻՓ Ն. Վ. ԱՔԻԿԵԱՆ

Բերա, 27 Ապրիլ 1912

*. Անցեալ Կիրակի, 12 Մայիս Ն. Տ. Ժամբ Յին յետ միջօրէի, Լոյսի Քարինքիա շողենաւով իրենց թեմերը մեկնեցան Արհի. Յովսէփ Եպս. Մեղրիսեղեկեան՝ Վիճակաւոր Կարնոյ, և Արհի. Յակոբ Եպս. Թօփուզեան՝ Վիճակաւոր Տարօնոյ և Վատալուրականի: Վերջնոյս կ'ընկերանար նոյն թեմի վերաբերող Գեր. Յակոբ Վ. Կիրակոսեան: Մեծարեցի ուղեւորներուն ի պատիւ՝ ողջերթի համար շողենա փութագրեցին Արհի. Ռօքոսեան և Արփիարեան Արքեպս. ներ և Արհի. Չէլէպեան Եպս., Քահանայք, Վիեննայի Միթիթարեան Հարք, մեկնող Եպս. այց աղբականք և իրենց թեմերուն երեսելիներէն ոմանք որ կը գտնուին ի Կ. Պոլիս Արհի. Վիճակաւորին Կարնոյ կ'ընկերանար իւր հօրաքոյր՝ Առ. Բոյր Մեթիլտէ Մեղրիսեղեկեան, Ան. Յղ. Կուստանաց կարգին արգելնաւոր անդամներէն մին (որ քոյրն է հանգ. հռչակաւոր Ստեփան Եպս. Մեղրիսեղեկեանի): Այս քոյրը կ'երթար ի Կարին իբր այցելու Տեղւոյն Մայրապետներու դպրոցին: Իր մեկնումին պատեհութեամբ ողջերթի եկած էին նոյն Կուստանաց կարգին Առ. ընդհ. Մեծաւոր Մայրն, տասնեակ մը մայրապետներով:

*. Արհի. Աւետիս Արք. Արփիարեան Ան. Յղ. կարգի կուստանաց Մայր վանքին մէջ եռօրեայ Ս. Կրթութեանց քարոզներ տուաւ, սանուհիներէն սքեմ հաղներիքները պատարասեցաւ համար նորընծայութեան, որ հանգիստաւ կերպով կատարուեցաւ Կ. Հարարձումի օրը:

*. Ամենապ. Հոգեւոր Տէր Շրջարեբական մ'ուղղեց Աւագ թեմի Ժողովրդապետներուն, յորում կը պատուիրէ անոնց՝ 1. բնաւ թոյլ չտալ իրենց եկեղեցեաց մէջ կէս—Չայնաւոր պատարագ մատուցանել, հակառակ ընկալեալ ծէսերու. 2. տասնց պատկանեալ հոգեւոր իշխանութեան կանխաւ թոյլատուութեան, չհրաւիրել Եպս. մը՝ նախադասելու համար եկեղեցական պաշտամանց, և ոյս Եպս. այց զգետաւորումը կատարել ի Դատադատուող Չախակոյմեան Աթոռոյ փրոյ, և ոչ ի Վանատան կամ յԱւանդատան. 3. մինչեւ իրաւիւրացի տօնը անպատճառ Կաթողիկէ Դպրապետներ և տիրացուներ պատրաստել:

*. Երկնից թագուհւոյն ձօնուած ծաղկաբոյր Մայիս ամիսը մասնաւոր լարեպաշտութեամբ նուիրագործելու համար, ըստ վաղեմի սովորութեան ամէն եկեղեցեաց առ Ս. Կոյան կուսանաց և ուր Մայրն ողորմութեան հոգեւորագ ջերմեռանդութիւններ կը կատարուին: Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ ամէն օր յետ միջօրէի ժամը 4ին կը սկսին արարողութիւնք, և կիրակի օրերը առաւելագոյն հանդիսութեամբ և ժամերգութեամբ կը կատարուին, պատշաճ քարոզ մըն ալ խօսուելով: Արտասուաց հոգին մէջ իբրեւ գուրգուրալից «րգիք» մեր սիրելի և զթառաւ Մօր պետք է փարինք, որպէսզի ապահով ըլլանք ամէն հոգեւոր և մարմնաւոր վտանգներէ, հետեւապէս կը յորդորուին հաւատացեալք յաճախելու այս միսթարական ջերմեռանդութիւններու:

~~~~~

#### Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Անցեալները Ռուսիոյ դեսպան Պ. Կիրս Հայոց Պատրիարքարանը այցելած ատեն, խօսակցութեան պահուն հարցում մ'ուղղեր է Արշարւնի Պատրիարքին թէ՛ Հայերը կրօնաւէր են, և որքան կապուած իրենց եկեղեցիին: Պատրիարքը ճիշդ սա պատասխանը կուտայ. «Ինչպէս ամէն երկիրներու մէջ, նոյնպէս հայերն ալ կրօնքի բմբունումներուն մէջ քիչ մը տարբերած են, և առաջնաւոր կրօնական սէրը չկայ. ասիկայ ընտանիք է, և ներկայ դարուս զարգացումէն առաջ եկած կրնայ նկատուիլ»: Դեսպանն ըստ թէ՛ «Ասոնք երիտասարդական խանդով եղած բանք են, և ժամանակ պիտի գայ որ այդպէս մտածողները պիտի ապաւինին կրօնքին»: Ընթերցողին վրայ ամենացաւալի տպաւորութեամբ լքում մը կը բերէ Պատրիարքի մը կողմանէ եղած այս պատշտական յայտարարութիւնը: Կրօնքի բմբունումներու տարբերութիւնը ըստ Արշարւնի Պատրիարքին, բնական լինում մըն է. և քանի՞ զարգացումն յառաջանայ, բնականաբար կրօնքը պիտի պակսի. մինչդեռ ճշմարտութիւնը քողորովին ասոր հակառակն է. մինչդեռ անկրօնութեան պտածաւը՝ ոչ թէ զարգացումն է, այլ բարուց ապականութիւնը, ամէն նուիրականութեանց և պարտուց արհամարհութիւնը, և գլխաւորաբար տգիտութիւնը. քանզի ըսած է մեծ փիլիսոփայ մը թէ քիչ գիտութիւնը Աստուծոյ կը հեռացնէ, իսկ ճշմարիտ գիտութիւնը առ Աստուած կը տանի: Եւ ո՞րչափ ցաւալի է ատենել թէ եկեղեցւոյ մը պետն ու հովիւն ու ներկայացուցիչն և թուրքիոյ Հայոց Եպիսկոպոսապետն է որ այս այլ լանդակի դաւանութիւնը կ'արտաբերէ՝ դեսպանի մը առջեւ, պաշտօնապէս, և իր ոչխարներուն ներկայութեան Երանելի թէ միայն իր անձնական խաբիւղ գաղափարն ըլլար, այլ, առաջ, եկեղեցւոյ մը եկեղեցականութեան փուտ աւերակ գաղափարը կը յայտնէ, առանց սկզբունքի, անտարբեր, կորուստի բնականաբար համակամած: Եւ ահա՛ աշխարհական դեսպան մ'է որ կը փութայ ուղղել այդ խոշոր անքաւելի սխալը, փոխելով դերերը և ստանձնելով կարծես Եպիսկոպոսի դերը, դաս մը տալով զարհուրելի, «ժամանակ պիտի գայ որ այդպէս մտածողներն պիտի ապաւինին կրօնքին»: — Աւա՛ղ այն եկեղեցւոյն որուն Հովիւապետը երկրորդական մտածումներով ծգնելով պաշտպանել անկրօնութիւնը երիտասարդ հայերու, այսպէս ահեղօրէն կը գայթակղեցնէ իր հօտը... Թո՛ղ տեսնեն ու մտածեն մեր երիտասարդները և պակսին, եթէ դեռ կրօնասէր են և կը փափաքին ի կորուստ չմատնել ազգը:

~~~~~

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Տարածել մաքրում — Տարածելի մէջ դուռն բոյս թորփիղներն ալ հաւաքում են: Այժմ առ ի գգաշուքին նեղուցին յատուկ մասնաւոր գործիքով մը կը խաղարկեն: Այս գործողութեան ալ աւարտումէն վերջ, առեւտրական նաւերու անցուղար-

ձին յատկացուած մասին վրայէն հին շոգենաւ մը պիտի անցուի, որմէ վերջ պիտի սկսի շոգենաւերու անցուդարձը:

*. Քալիմնոսի գրաւումը.— Այլեւայլ տեղերէ հասած հեռագիրներէ իմացուած է որ իտալացիք գրաւած են նաեւ Քալիմնոս կղզին: Ապրիլ 29ին գիշերը իտալական զրահաւոր մը դաւով առտուան դէմ 900 զինուոր ցամաք հանած և կղզին գրաւած է: Քալիմնոս կը գտնուի Քոս կղզիին հիւս. արեւելեան կողմը, և ունի եօթնէն ութ հազար բնակիչ, մեծ մասամբ Յոյն, որոնք կ'զբաղին ձկնորսութեամբ և սունկորսութեամբ:

*. Սուպիի պէյի հեռագիրը.— Արշիպեղագոսի կուսակալ Սուպիի պէյ, որուն իտալացիներուն ձեռք գերի իյնալը առաջուեցաւ: իտալացիներէն արտօնուեր է միայն սուլտանական հեռագիրը քաշելու իր մէկ աղգականին. «Ողջ եմ. ՍՈՒԿՂԻ»:

*. Ալպանիոյ մէջ թէեւ ապստամբական շարժում մը ծաղր առած էր, բայց Օսմ. կառավարութեան ձեռք առած աղգու միջոցներուն շնորհիւ մարիլու վրայ է: Կաթողիկէ Մալիսորներու պետը առանձին հեռագրով իմացուցած է թէ լալարովին սխալ են Մալիսորներու մասին տարածուած գիտութեան որ լուրերը:

*. Մէկ քանի օրէ ի վեր զրոյց կը շրջէր թէ ռուսական նաւարածին մը կը յածէր Սեւ ծովու օսմանեան եղերքներուն մօտ: Բ. Դրան մէջ կը խօսուի թէ ռուսական այդ նաւարածինը Աէփոսաւփօյ դարձած է:

*. Քիոսէ 24/7 Մայիս կը գրեն.— Մինչեւ այս ժամուս Սագրդի մէջ բան չէ պատահած, բայց իոյում բնասանքները ամբողջովին մեկնած են, ամբողջ թաղը թափուր է: Հոն գտնուող օսմ. զինուորներուն գրեթէ 200ը հայ են, ամէնքն ալ ողջ առողջ և հանգիստ են: Քաղաքին մէջ անդարբութիւնը նախանձեղի վիճակ մը ունի, ամէն մարդ իր գործով կը զբաղի խանութները միշտ բաց են:

*. Գրաւում Գոր. կղզիներու.— Սթէֆանի նոր հեռագիրներ հաղորդէ.

Հռոմ, 12 Մայիս.— Ծովակալ Վիպլէ անթել հեռագրով իմացուց Բարբաթօս, Քասսոս, Բիսգօրի, Նիսիրոս կղզիներուն գրաւումը: Տեղական իշխանութեանց ներկայացուցիչները գերի բռնուեցան: Ուրիշ կղզիներ ալ պիտի գրաւուին:

*. Ռուսիոյ զինուորական պատգամաւորները.— Հաւաստի աղբիւրէ կ'իմացնեն թէ ռուս կառավարութիւնը վերջերս սկսած է Օսմանայի շրջակայքը զինուոր հաւաքել: Նոյնպէս կը տեղեկացնեն թէ Սեւ ծովու նաւատորմին արձակուրդով բացակայող սպաները իրենց պաշտօնին գլուխը դառնալու հրահանգ ստացան, Նիքոլայէֆի նաւարանին մէջ տեւորաւ գործունէութիւն մը կը տիրէ (Ալեքսիքօս):

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Քրիստոսի Համբարձումը	225
Հրաժարական Հասութից Խորհրդոյ	228
Անկլիկան Եկեղեցի	230
Հեբուս մը	233
Թերթեր	234
Մանրագոր	236
Տեղեկագրական	237

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿ



ՏԵՌԻԷՆԻՄԱԳԻՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՄԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական ԸՆԿ. Էպուստուոս Երեսէսի Նո. 27

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...